ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՊՐՈԲԼԵՄԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆ

Այսօր չկա մի հայ, որ չընհուզվի ղարաբաղյան պրոբլեմով, չպահանջի վերամիավորել հայ ժողովրդի երկու հատվածները: Բայց արդեն շրջափակման մեջ ենք, տնտեսական ծանր իրավիճակում: Ադրբեջանական հանրապետության ղեկավարության ցուցումով կազմավորվում են բազմաթիվ հրոսակախմբեր, որոնք կրկնակի շրջափակման մեջ են պահում ԼՂԻՄ-ի հայկական գյուղերն ու բնակավայրերը: Քիչ չեն հայերի նկատմամբ բռնությունները: Անմեղ մարդկանց ծեծելը, սպանելը, ավտոմեքենաները ջարդելն ու գնացքների անիվները ռելսերին զոդելը, վագոնները թալանելը, միլիցիայի աշխատողների վրա հարձակումները, նույնիսկ եթերը ընվաճելն ու հեռուստահաղորդումները կանխելը: Ավազակային, ստոր գործողություններն այսօր յուրահատուկ են դարձել ադրբեջանական վայրենի ամբոխի համար:

Ո՞ւմ համար պարզ չէ, որ, դիմելով նախնիների մեթոդներին, ադրբեջանական խուժանը փորձում է շեղել երկրի կենտրոնական մարմինների, ղեկավարների ուշադրությունը, ստիպել նրանց մերժելու ղարաբաղյան պրոբլեմի լուծման հայ ժողովրդի արդարացի պահանջը: Ցավոք, նրանց շատ բան է հաջողվում և հաջողվում է վերադաս մարմինների անվճռականության, անհետևողականության, ազգերի ինքնորոշման լենինյան սկզբունքների սխալ մեկնաբանության պատճառով: Ընդհակառակը, կանգնելով ադրբեջանցիներին պաշտպանելու դիրքերում, կուսացական ու պետական կենտրոնական մարմիններն անտեսում են այդ սկզբունքը, մոռացության տալով Վ. Ի. Լենինի այն պահանջը, ըստ որի ինքնորոշման հարցը լուծում է ոչ թե կենտրոնը, այլ անջատվող ազգի սեյմը, պառլամենտը՝ ռեֆերենդումի միջոցով:

Ազգերի ինքնորոշման իրավունքը դուրս է եկել մեկ երկրի սահմաններից և դարձել միջազգային նորմա: Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհրդակցության եզրափակիչ ակտում հստակ կերպով նշված է, որ բոլոր ժողովուրդներն էլ իրավունք ունեն լիակատար ազատության պայմաններում որոշել իրենց ներքին ու արտաքին քաղաքական ստատուսը, քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային զարգացման ուղղությունը: Այդ փաստաթղթում մեծ տեղ է հատկացվում ժողովուրդների ինքնորոշման պրոբլեմին: Մենք համոզված ենք, որ ղարաբաղյան հանգույցը վաղուց քանդված կլիներ, եթե խորհրդային պետության ղեկավարությունը նրան մոտենար այնպիսի հետևողականությամբ ու սկզբունքներով, ինչպես վարվում է Ասիայի, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի ցանկացած ժողովրդի պահանջներին, երբ նրանք ձգտում են ինքնորոշման: ԽՄԿԿ Կենտկոմի սեպտեմբերյան պլենումն ավարտվեց, բայց այն ոչինչ չտվեց բազմաչարչար հայ ժողովրդին, որն այնքան հույսեր էր կապել նրա հետ: Իսկ ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ս. Հարությունյանի արդար պահանջները կորան երկրի՝ գործից անտեղյակ շատ ղեկավարների մոդայիկ ճառերի ինքնանպատակ աղմուկի մեջ: Մինչդեռ ինքնորոշման միջազգային փաստաթղթերում այն պահանջը կա, որ պետք է կենտրոնական մարմինները հարգանք ցուցաբերեն ինքնորոշվող ժողովրդի պահանջների նկատմամբ:

1981 թ. դեկտեմբերի 9-ի ՄԱԿ-ի դեկլարացիայում արձանագրված է, որ պետությունը իրավունք չունի ժողովուրդների ինքնորոշմանը հակադրել նրա ներքին գործերին միջամտելը: Մինչդեռ Ադրբեջանը շրջափակել է Հայաստանն ու Արցախը, դիմել է չհայտարարված պատերազմական գործողությունների, և կենտրոնական իշխանությունները լռելյայն համաձայնել են ու ոչինչ չեն անում, անգամ չեն պաշտպանում ամբողջ երկրին պատկանող երկաթուղին: Բայց ճշմարտությունը չի մեռնի: Ով կարդա իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Յուրի Բարսեղովի «Ինքնորոշման իրավունքը միջազգային պրոբլեմների դեմոկրատական լուծման հիմքն է: Լեռնային Ղարաբաղի պրոբլեմի առթիվ» աշխատությունը, ծանոթանա հեղինակի հիմնավոր փաստարկներին, նա կհամոզվի, որ գտնվել է ղարաբաղյան պրոբլեմի լուծման նոր ուղի:

Գրքում հանգամանորեն ներկայացված են երկրի սահմանադրական ճգնաժամը, պետության տերիտորիալ անձեռնմխելիության սկզբունքի ու ինքնորոշման հակասությունը, անջատման տնտեսական անհնարինության կեղծ սկզբունքի բովանդակությունը: Յու. Բարսեղովը հիմնավորում է այն ճշմարտությունը, որ Անդրկովկասում խաղաղ գոյակցության միակ սկզբունքը Արցախի ժողովրդի ազատ ինքնորոշումն է:

Հեղինակն արդարացիորեն պնդում է, որ ադրբեջանական իշխանությունները Ղարաբաղի նկատմամբ կիրառել են այն հայերից մաքրման քաղաքականություն, որի հետևանքով այժմ հայազգի բնակչությունը, բնական աճի 731 հազար 959 մարդու փոխարեն, չի անցնում 123 հազարից, իսկ ադրբեջանցիները, ընդհակառակը, ավելացել են, հասնելով 32 հազար 548-ի:

Նկատի ունենալով ԱՄՆ-ի, Հնդկաստանի, Նիգերիայի և այլ երկրների փորձը, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ինքնորոշման և Ազգային խորհրդի ստեղծման փաստը, Յու. Բարսեղովը հանգել է այն հետևության, որ ԼՂԻՄ-ի պրոբլեմը այժմ հնարավոր է լուծել նրան միութենական (ֆեդերալ) ենթակայության տարածքի ստատուս տալով և այն ԽՍՀՄ Գերագույն խորհրդին՝ ի դեմս նրա նախագահության, կամ նախագահի, ենթարկելով: Մարզի կառավարումը կիրականացվի դեմոկրատական ընտրությամբ ձևավորվող ժողովրդական դեպուտատների խորհրդի կողմից, իսկ կուսակցական մարմինները կենթարկվեն ԽՄԿԿ Կենտկոմին: Ֆեդերալ մարզի կառավարման բոլոր օղակները (ֆինանսական, նյութա-տեխնիկական, դատական, դատախազական և այլն) կիրականացվեն կենտրոնական իշխանությունների կողմից: Ֆեդերալ մարզի ստատուսով կանխվում են այն բոլոր ձեռնարկումները, որոնք իրականացվում էին ի վնաս տեղի հիմնական ազգաբնակչության: Միութենական մարմինների կողմից ֆեդերալ մարզի ստատուսի դադարեցման դեպքում տեղի հիմնական ազգաբնակչությանն իրավունք է տրվում որոշելու, թե միութենական որ հանրապետության կազմում է ինքը ցանկանում լինել:

Գիրքը, որ ընթերցողներին ներկայացրեց «Հայաստան» հրատարակչությունը 30 հազար օրինակ տպաքանակով, ռացիոնալ ու արդարացի շատ սկզբունքներ է պարունակում և ներկայացնում է ղարաբաղյան պրոբլեմի լուծման համեմատաբար ընդունելի ուղի: Թե որքանով այն կընդունվի ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանում, կախված կլինի դեպուտատների արդարամտությունից, խորհրդային ժողովրդին ծառայելու նրանց պատրաստակամությունից, վերակառուցմանը նվիրվածության աստիճանից:

Մանուկ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ՀԽՍՀ հրատպետկոմի
գլխավոր խմբագիր